Հայոց լեզու

1. **Ընդգծվածներից որո՞նք են իրանիշ գոյականներ:**

Մեր **տների** փայտյա դարակներում **բազմած**՝

Ապրում են լուռ …. և կենդանի են հար:

Ես սիրում եմ նրանց լաբիրինթոսն այս **լուռ**,

Երանգների, գույնի շռայլությունն **այս** մեծ,

Ինձ **սիրելի** է միշտ բազմազեղումն այս **խոր**…

Օ, **գրքերի** աշխարհը տիեզերք է **անեզր**...

2. Ընդգծվածներից որո՞նք ե անձնանիշ գոյականներ:

ա/ Թոռը՝ Ծողոն՝ մի կարմրաթուշ **աղջիկ**, ներս բերեց կաթով **սուրճը**: Հաճի աղան հիշեց իր անցյալը՝ ինչպես հանգիստ քուն դրեց ու թաղեց հանգուցյալ **հոր** կողքին իր մորը: Միտքը բերեց՝ ինչպես ինքը երեսուն տարեկանում իր **կնոջը** տարավ **Երուսաղեմ**… Հետո **որդիները** հասունացան, ամուսնացան, երեխաներ ունեցան…

Բայց….. մի երեկո **Արտաշատի** կիսաշրջանաձև թատրոնը լեփ – լեցուն էր հանդիսականներով: Դավադրությամբ հենց թատերասրահում

LIVEWORKSHEETS

ձերբակալում են **Արտավազդին**՝ կնոջ և որդիների հետ միասին տանելով **Ալեքսանդրիա**:

3. Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

ա) լազարյան ճեմարան, աշոտ երկաթ, մխիթարյան միաբանություն, չմշկիկ սուլթան

բ) սողոմոն իմաստուն, պարսից ծոց, փոքր ասիա, արևելյան տավրոս

գ) տիգրան մեծ, ռուսաստանի դաշնություն, գագիկ առաջին, գրիգոր լուսավորիչ

դ) արշակունյաց թագավորություն, փոքր մհեր, սառուցյալ օվկիանոս, թոմ սոյեր

4. Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:

ա. միավորված ազգերի կազմակերպություն, ամպերի օրենք, հայկական լեռնաշխարհ, ռուսաստանի դաշնություն, պետական դուման

բ. շամիրամի ջրանցք, արշակունյաց հարստություն, աղթամարի վանք, մեծ եղեռն

գ .գեղամա լեռներ, գրիգորիս աղթամարցի, նոր խարբերդ, աղբյուր սերոբ

LIVEWORKSHEETS

դ .հայաստանի հանրային հեռուստատեսություն, սուեզի ջրանցք, դեղին ծով, վան գոգ

5. Համապատասխանեցրո՛ւ հոլովները բառերին:

ա) դպրոցում 1) գործիական

բ) սյանը 2) ուղղական

գ) այգուց 3) ներգոյական

դ) անվամբ 4) տրական

ե) պապիկ 5) բացառական

6. Որոշի՛ր ընդգծված գոյականների հոլովը:

Կիսարթուն քամին (……) կտուրից (……) թռչում,

Ցանկապատին (……) է հենում կռնակը (……...),

Անթեղի վրա կատուն (……...) է ննջում,

Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը…

7. Ո՞ր շարքում են միայն ա ներքին հոլովման պատկանող բառերը:

ա) գրություն, ջրշուն, գարուն, գինետուն բ) տեղանուն, գրատուն, հեռագրասյուն, հարություն

LIVEWORKSHEETS

գ) ձյուն, մանկություն, մահ, ուղղանկյուն դ) աշուն, արյուն, անկյուն, գրատպություն

8. Ո՞ր շարքում են միայն ու արտաքին հոլովման պատկանող բառերը:

ա) հայելի, թզենի, մարդ, գինի բ) մտածել, հոգնակի, հայուհի, բալենի

գ) ձի, խոսել, բանալի, հայ դ) կիրակի, Սոչի, Արզնի, արփի

9. Ընդգծի՛ր ան հոլովման պատկանող բառերը:

Տեղանուն, գարուն, արյուն, աշուն, ընդմիջում, կեսօր, օձաձուկ, նուռ, խիզախություն, շրշյուն:

10. Ո՞ր հոլովման են պատկանում տրված գոյականները:

Գիշեր _____ քույր _____

սոճի _____վայրկյան _____

ցնծություն _____ տեղանուն _____

գառ _____ պատմահայր _____

հայելի _____ տիկին _____

LIVEWORKSHEETS